ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2015թ. գործունեության վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ, 2016թ.

Բովանդակություն

Հապավումներ 3
Նախաբան 4
1. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական կարգավորումն ու զարգացումները..... 4
2. ՓԼ/ԱՖ ոլորտում իրականացված վերլուծությունները և դրանց արդյունքները5
3. Ներպետական համագործակցություն 7
4. Միջազգային համագործակցություն 8
5. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության խախտումները, կիրառված պատասխանատվության միջոցները.....13
6. Ուսուցում, խորհրդատվություն և տեխնիկական օժանդակություն.....14
Հավելվածներ 15

Հապավումներ

ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ՋՈՋ	Ջանգվածային ոչնչացման զենք
ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
ՄԱԿ	Միացյալ ազգերի կազմակերպություն
ՄՏՏ	Միասնական տեղեկատվական տիրույթ
ՓԼ/ԱՖ	Փողերի լվացում և ահաբեկչության ֆինանսավորում
ՖԴԿ	Ֆինանսական դիտարկումների կենտրոն
ՖՀԿՎ	Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն
ՖՀՄ	Ֆինանսական հետախուզության մարմին
ՖՀՄԴԽ	ԱՊՀ մասնակից պետությունների ՖՀՄ-ների ղեկավարների խորհուրդ
ՖՎՎ	Ֆինանսական վերահսկողության վարչություն

Նախաբան

Սույն հաշվետվությամբ ներկայացվում են 2015թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում կատարված աշխատանքները և դրանց արդյունքները, որոնցով ապահովվել է նաև Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2013-2015թթ. ազգային ռազմավարությամբ նախանշված նպատակների իրագործումը:

Աշխատանքները կատարվել են ներպետական մարմինների և միջազգային կառույցների հետ բազմակողմ համագործակցության միջոցով և ուղղված են եղել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական կարգավորմանը, ՓԼ/ԱՖ հնարավոր բացահայտումներին, միջազգային և ներպետական համագործակցության ամրապնդմանը, հաշվետվություն տրամադրող անձանց աշխատակիցների՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում գիտելիքների զարգացմանը, ՀՀ ԿԲ ՖԴԿ և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ներառված այլ մարմինների աշխատակիցների վերապատրաստմանը:

Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի 2015թ. դեկտեմբերի 10-ի լիագումար նիստում հաստատվել է Հայաստանի Հանրապետության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման հաշվետվությունը (այսուհետ՝ Գնահատման հաշվետվություն)[1], որտեղ ամփոփվել են դեռևս 2014թ.-ից սկսված Հայաստանի Հանրապետության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի՝ ՖԱԹՖ-ի 40 հանձնարարականներին համապատասխանության գնահատման արդյունքները:

1. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական կարգավորումն ու զարգացումները

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի անհրաժեշտ մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխանող օրենսդրության ներդրման ուղղությամբ աշխատանքները 2015թ. շարունակվել են իրավական ստորակարգման մի շարք մակարդակներից կազմված իրավական ակտերի ընդունման, դրանց կիրառության վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների հրապարակման եղանակով:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2015թ. ապրիլի 22-ի թիվ 1/324Ա և 1/325Ա որոշումներով համապատասխանաբար հաստատվել են «Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերում անձանց ներառելու առաջարկի ներկայացման, Լիազոր մարմնի կողմից հրապարակվող՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերում անձանց ներառելու» կարգը և «Ցանկերում ներառված անձանց և կազմակերպությունների գույքի սառեցման, սառեցված գույքին հասանելիության ապահովման և հարակից գործողությունների վերաբերյալ» ուղեցույցը:

[1] Առավել մանրամասն տե՛ս «Միջազգային համագործակցություն» վերտառությամբ 4-րդ բաժնում:

2015թ. դեկտեմբեր ամսին սկսվել են մի շարք իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ նախատեսող իրավական ակտերի նախագծմանն ուղղված աշխատանքները, որոնք պայմանավորված են ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի 49-րդ լիագումար նիստում հաստատված՝ Գնահատման հաշվետվությամբ ներկայացված առաջարկություններով:

2. ՓԼ/ԱՖ ոլորտում իրականացված վերլուծությունները և դրանց արդյունքները

2015թ. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակներում ՖԴԿ-ն իրականացրել է համակողմանի վերլուծություններ՝ ստացված ՓԼ/ԱՖ հնարավոր տարրեր պարունակող ազդակների, կասկածելի գործարքների և գործարար հարաբերությունների վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա[2]: Կատարված վերլուծությունների արդյունքներով համապատասխան ՓԼ/ԱՖ վարկածների առաջադրմամբ տեղեկացումներ են ուղարկվել ինչպես իրավապահ մարմիններին, այնպես էլ օտարերկրյա ՖՀՄ-ներին: Ստացված և վերլուծված ազդակներում նկարագրված սխեմաները տարաբնույթ և բազմազան են եղել, սակայն ինչպես և նախորդ տարիներին, դրանցում հաճախակի են եղել հետևյալ տիպային օրինակները՝

- Խարդախության տարատեսակ սխեմաներ՝ կապված կեղծ քարտերի, արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերի գողացված տվյալների, համակարգչային տեխնիկայի, ինչպես նաև զանգվածային մարքեթինգի տարբեր մոդելների կիրառմամբ հանցավոր ճանապարհով ստացված միջոցների օրինականացման փորձերի հետ,
- Հնարավոր հարկային պարտավորություններից խուսափելու, ապօրինի ձեռնարկատիրություն իրականացնելու, տնտեսական գործունեության ծավալները թաքցնելու միտում պարունակող ֆինանսական գործարքներ,
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված տիպաբանություններով նկարագրված սխեմաներին համապատասխանող այլ դեպքեր:

ՖԴԿ կողմից իրավապահ մարմիններին ուղարկված տեղեկացումների և հարցումների, ինչպես նաև իրավապահ մարմիններից ստացված հարցումների 2010-2015թթ. վիճակագրությունը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

	2010 թ.	*2011 թ.*	*2012 թ.*	*2013 թ.*	*2014թ.*	*2015թ.*	*Ընդամենը*
ՖԴԿ կողմից տեղեկացումներ իրավապահ մարմիններին	23	17	11	25	28	31	**135**
ՖԴԿ կողմից իրավապահ մարմիններից խնդրարկված տեղեկատվություն	15	33	11	17	17	9	**102**

[2] Տե՛ս հավելված 1:

Իրավապահ մարմինների կողմից ՖԴԿ-ից խնդրարկված տեղեկատվություն	53	58	61	36	66	36	**310**

Օտարերկրյա գործընկերների հետ համագործակցության շրջանակներում 2015թ. ՖԴԿ կողմից օտարերկրյա ՖՀՄ-ներին կատարվել է թվով 28 հարցում, իսկ օտարերկրյա ՖՀՄ-ներից ստացվել է թվով 26 հարցում (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

	2010թ.	*2011թ.*	*2012թ.*	*2013թ.*	*2014թ.*	*2015թ.*	*Ընդամենը*
ՖԴԿ-ին ուղղված հարցումներ օտարերկրյա ՖՀՄ-ներից	25	36	11	32	17	26	**147**
ՖԴԿ կողմից կատարված հարցումներ օտարերկրյա ՖՀՄ-ներին	28	30	38	24	39	28	**187**

Հարկ է նշել, որ 2015թ. քրեական հետապնդման մարմինների կողմից հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու հատկանիշներով հարուցվել է 4 քրեական գործ: Քրեական գործերից 1-ը հարուցվել է միայն փողերի լվացման հանցակազմով, իսկ մնացած 3-ի դեպքում փողերի լվացմանը նախորդել են հետևյալ արարքները՝

- խարդախություն,
- համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակություն,
- գողություն:

Հարուցված քրեական գործերի, կայացված մեղադրական դատավճիռների, ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ կասեցված գործարքներում և գործարար հարաբերություններում ներգրավված միջոցների, ինչպես նաև փողերի լվացման մասով կայացված մեղադրական դատավճիռներով բռնագրավման ենթակա գումարի վերաբերյալ 2010-2015թթ. վիճակագրությունը ներկայացված է աղյուսակներ 3-ում և 4-ում:

Աղյուսակ 3

	2010թ.	*2011թ.*	*2012թ.*	*2013թ.*	*2014թ.*	*2015թ.*	*Ընդամենը*
Հարուցված քրեական գործեր	13	12	9	10	9	4	**57**
Կայացված մեղադրական դատավճիռներ	3	5	2	2	1	0	**13**

Աղյուսակ 4

	ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ կասեցված գործարքներում և գործարար հարաբերություններում ներգրավված միջոցներ	Բռնագրավման ենթակա գումարներ[3]
2010 թ.	345.000 ՀՀ դրամ, 290.000 ԱՄՆ դոլար	514.026.500 ՀՀ դրամ
2011 թ.	0	415.517.535 ՀՀ դրամ
2012 թ.	23.003.274 ՀՀ դրամ	12.220.947 ՀՀ դրամ
2013 թ.	54.893.971 ՀՀ դրամ	25.079.666 ՀՀ դրամ
2014 թ.	0	283.600 ՀՀ դրամ
2015թ.	10.000.000 ՀՀ դրամ	0
Ընդամենը	88.242.245 ՀՀ դրամ, 290.000 ԱՄՆ դոլար	967.128.248 ՀՀ դրամ

ՓԼ/ԱՖ հնարավոր ռիսկերի զսպման նպատակով միջոցառումներ են իրականացվել նաև ՀՀ ֆինանսական և ոչ ֆինանսական համակարգերը ՓԼ/ԱՖ նպատակով չարաշահելու հնարավոր փորձերը կանխելու ուղղությամբ:

Տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներով պայմանավորված՝ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գործողությունների շրջանակներում ՖԴԿ-ն ռազմավարական և գործառնական վերլուծություններ է կատարել ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր աղբյուրների, ուղղությունների, սխեմաների, ներգրավված անձանց բացահայտման նպատակով: Հավաքվել և ուսումնասիրվել է դիտարկվող ժամանակահատվածում ահաբեկչության ֆինանսավորման տեսանկյունից բարձր ռիսկային համարվող տարածքներին որևէ կերպ առնչվող գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը: Վերլուծությունների արդյունքները, ըստ անհրաժեշտության, տրամադրվել են հայաստանյան պատկան մարմիններին, ինչպես նաև օտարերկրյա ՖՀՄ-ներին և կառույցներին: Արդյունքում ևս մեկ անգամ արձանագրվել է, որ ՀՀ-ում ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերը շատ ցածր են, ինչն արտացոլված է նաև 2014 թվականին կատարված՝ ՀՀ-ում ՓԼ/ԱՖ ռիսկի ազգային գնահատման եզրահանգումներում: Կանխարգելիչ միջոցառումների շրջանակում կարելի է առանձնացնել ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպություններին տրված հանձնարարականներն առ այն, որ բարձր ռիսկային համարվող երկրներին և տարածքներին առնչվող գործառնությունների դեպքում անհրաժեշտ է իրականացնել առավել խորը ուսումնասիրություններ, պահանջել լրացուցիչ հիմնավորումներ, իսկ բավարար տեղեկատվության բացակայության դեպքում մերժել և/կամ կասեցնել գործարքը:

3. Ներպետական համագործակցություն

ՓԼ/ԱՖ դեմ պայքարում խիստ կարևորվում է ոլորտում ներգրավված ներպետական իրավասու մարմինների միջև արդյունավետ համագործակցությունը, որն էլ իրականացվել է հաշվետու ողջ ժամանակաշրջանի ընթացքում տարբեր հարթակներում:

[3] Բացի աղյուսակում նշված՝ հօգուտ պետական բյուջեի բռնագանձման ենթակա միջոցներից, 2011թ. փողերի լվացան հիմքով կայացված դատավճիռների համաձայն, հօգուտ երրորդ անձի բավարարվել է ևս 83 535 019 ՀՀ դրամի բռնագանձման պահանջ:

2015թ. շարունակվել են ՖԴԿ և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներգրավված իրավասու մարմինների միջև անվտանգ կապուղիների միջոցով տեղեկատվության արագ փոխանակմանն ուղղված MSS համակարգի ներդրման աշխատանքները:

Հաշվետու տարում մշակվել և շահագրգիռ գերատեսչությունների հետ համաձայնեցվելուց հետո հաստատվել է ««ՀՀ-ում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի ազգային գնահատման» հաշվետվությամբ վեր հանված խնդիրների լուծման» եռամյա գործողությունների ծրագիրը, որն ուղղված է ՀՀ Նախագահի 21.03.02թ. թիվ ՆԿ-1075 կարգադրությամբ ստեղծված «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Միջգերատեսչական հանձնաժողով) 2014թ. նիստում քննարկված և հավանության արժանացած «ՀՀ-ում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի ազգային գնահատման» հաշվետվությամբ վեր հանված խոցելիությունների վերացմանը և ՓԼ/ԱՖ սպառնալիքներին դիմակայելու տեսանկյունից արդյունավետության բարձրացմանը:

Ներպետական համագործակցության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ կողմից իրականացվել են նաև ուսուցման մի շարք ծրագրեր, որոնք ներկայացված են սույն հաշվետվության «Ուսուցում, խորհրդատվություն և տեխնիկական օժանդակություն» վերտառությամբ 6-րդ բաժնում:

4. Միջազգային համագործակցություն

ՖԴԿ-ն ապահովում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցությունը՝ ներկայացնելով ՀՀ-ն միջազգային կառույցներում և համագործակցելով ֆինանսական հետախուզության օտարերկրյա մարմինների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ-ն շարունակել է միջազգային գործընկերների հետ համագործակցությունը՝ ներգրավվելով միջազգային փաստաթղթերի լրամշակման աշխատանքներում, ինչպես նաև այլ միջազգային նախաձեռնություններում:

Ձեռնարկվել են գործողություններ՝ ուղղված միջազգային կառույցների կողմից կիրառվող սահմանափակումների վերաբերյալ պահանջների կատարմանը: Այսպես, ՖԴԿ ինտերնետային կայքում հրապարակվել և հաշվետու անձինք իրազեկվել են.

- ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի (այսուհետ՝ ՄԱԿ ԱԽ)՝ միջոցների սառեցման պահանջ սահմանող բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերում, ներառյալ՝ 1267/1989/2253 և 1988 բանաձևերով ԻԼԻՊ-ի (ԴԱԵՇ) և Ալ Քաիդայի, ինչպես նաև Թալիբանի հետ կապված անձանց ցանկերում կատարված թարմացումների վերաբերյալ,
- ՖԱԹՖ-ի՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ռազմավարական բացեր ունեցող երկրների, ինչպես նաև այն երկրների վերաբերյալ, որոնք ՖԱԹՖ-ի ՓԼ/ԱՖ չափանիշներին համապատասխանության ընթացիկ դիտանցման շրջանակներում որակվել են որպես ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ռազմավարական բացեր ունեցող, և դրանք վերացնելու նպատակով ՖԱԹՖ-ի հետ համատեղ մշակել են գործողությունների ծրագիր:

Կատարված փոփոխությունները և լրացումներն արտացոլվել են նաև ՖԴԿ տվյալների շտեմարանում:

Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախումբ

ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատում

2015թ-ին ավարտվել է Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի (այսուհետ՝ ՄԱՆԻՎԱԼ հանձնախումբ) կողմից ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման գործընթացը, որի նախապատրաստումը սկսվել էր դեռևս 2014թ. հունիս ամսին, և ՀՀ-ն հանդես էր գալիս ՖԱԹՖ վերանայված Հանձնարարականներով գնահատվող՝ հանձնախմբի կազմում առաջին երկիր:

Համաձայն ՖԱԹՖ 2013թ. վերանայված Մեթոդաբանության՝ երկրների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի փոխադարձ գնահատման համար որդեգրվել է ՖԱԹՖ հանձնարարականներին տեխնիկական համապատասխանության և համակարգի արդյունավետության գնահատման փոխլրացնող մոտեցումը:

Մայիս ամսին տեղի է ունեցել գնահատող խմբի երկշաբաթյա այցը Հայաստանի Հանրապետություն՝ ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի գործադիր քարտուղարի գլխավորությամբ:

Այցի ընթացքում գնահատող խմբի անդամները հանդիպումներ և քննարկումներ են ունեցել ինչպես Միջգերատեսչական հանձնաժողովի և վերջինին կից աշխատանքային խմբի անդամների, այնպես էլ ՓԼ/ԱՖ/ՋՈՋ տարածման ֆինանսավորման դեմ պայքարում ներգրավված իրավասու այլ պետական մարմինների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ: Ընդհանուր առմամբ անցկացվել է 50-ից ավելի հանդիպում ՓԼ/ԱՖ/ՋՈՋ տարածման ֆինանսավորման դեմ պայքարում ներգրավված մարմինների շուրջ 250 ներկայացուցիչների հետ:

Այցի արդյունքում ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի գնահատող խումբը կազմել և ներկայացրել է գնահատման նախնական արդյունքներով վերհանված առանցքային խնդիրները: Նշված փաստաթուղթը շրջանառվել է գործընթացում ներգրավված ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների միջև, հավաքվել են վերջինների դիտողությունները, որոնք տրամադրվել են ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբին:

Հայաստանյան իշխանությունների կողմից ներկայացված դիտողությունները հաշվի առնելով՝ ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի գնահատող խումբը ներկայացրել է գնահատման ամբողջական հաշվետվության նախագիծը, որը նույնպես շրջանառվել է գործընթացում ներգրավված ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների միջև, հավաքվել են վերջինների դիտողությունները և առաջարկները և տրամադրվել են ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբին:

Նոյեմբեր ամսին Ստրասբուրգում տեղի է ունեցել գնահատող խմբի հետ նախնական հաշվետվության շուրջ հանդիպում-քննարկում՝ ՖԴԿ, ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ գլխավոր դատախազության ներկայացուցիչների մասնակցությամբ:

2015թ. դեկտեմբերի 10-ին ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի 49-րդ լիագումար նիստի ընթացքում քննարկվել և հաստատվել է ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման հաշվետվությունը:

Հաշվետվությամբ արձանագրվել է, որ.

- Տեխնիկական գնահատման տեսանկյունից՝ Հայաստանը լիովին կամ հիմնականում համապատասխանում է ՖԱԹՖ-ի 40 հանձնարարականներից թվով 35-ին:
- Արդյունավետության գնահատման տեսանկյունից՝ Հայաստանն ապահովել է արդյունավետության զգալի կամ բավարար մակարդակ 11 անմիջական արդյունքից թվով 9 անմիջական արդյունքի մասով:

Արդյունավետության զգալի կամ բավարար մակարդակ է արձանագրվել միջազգային համագործակցության, ֆինանսական համակարգում ներդրված կանխարգելիչ միջոցառումների, իրավաբանական անձանց թափանցիկության, ԱՖ դեպքերի քննության, ԱՖ կանխարգելիչ միջոցառումների ներդրման, ինչպես նաև ՋՈՋ տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտներում:

Միևնույն ժամանակ արձանագրվել է, որ ՓԼ հետ կապված գործերի քննության և հետագա դատաքննության, ինչպես նաև գույքի բռնագանձման առնչությամբ անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ միջոցառումներ:

Համաձայն ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի որոշման՝ հաշվետվության հիման վրա ձեռնարկված քայլերի վերաբերյալ ՀՀ կողմից առաջընթացի հաշվետվություն կներկայացվի 2018թ. ապրիլին, իսկ որոշ հարցերով միջանկյալ հաշվետվություն՝ 2016թ. դեկտեմբերին:

ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի լիագումար նիստեր

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ ներկայացուցիչները ՀՀ պատվիրակության կազմում մասնակցել են ՄԱՆԻՎԱԼ-ի 47-ից 49-րդ հերթական լիագումար նիստերին:

Նիստերի ընթացքում քննարկվել են հետևյալ հիմնական հարցերը.

- Երկրների կողմից ՄԱԿ ԱԽ-ի թիվ 2161 (2014), 2170 (2014) և 2199 (2015) բանաձևերի կիրառման վերաբերյալ հաշվետվությունները,
- Ուկրաինայի և Վատիկանի 3-րդ փուլի գնահատման առաջընթացի հաշվետվությունները,
- Մոնտենեգրոյի, Բոսնիա և Հերցեգովինայի, Միացյալ Թագավորության կախյալ տարածքների՝ Գերնսիի և Ջերսիի 4-րդ փուլի գնահատման հաշվետվությունները,
- Լիտվայի, Բոսնիա և Հերցեգովինայի համապատասխանության խորացված ընթացակարգերի կիրառության վերաբերյալ հաշվետվությունները,
- ՄԱՆԻՎԱԼ-ի անդամ մի շարք երկրների[4] ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 4-րդ փուլի գնահատման առաջընթացի հաշվետվությունները,
- Հայաստանի Հանրապետության 5-րդ փուլի գնահատման հաշվետվությունը:

ՖԴԿ ներկայացուցիչները հանդես են եկել որպես Մոնտենեգրոյի 4-րդ փուլի գնահատման իրավական ոլորտի գնահատող, ինչպես նաև Միացյալ Թագավորության

[4] Անդորա, ՆՀՀ Մակեդոնիա, Չեխիա, Մալթա, Լեհաստան, Վրաստան, Սլովենիա, Լատվիա, Սլովակիա, Իսրայել, Մոլդովա, Ադրբեջան, Բուլղարիայ, Խորվաթիա, Լիտվա

կախյալ տարածք Ջերսիի գնահատման հաշվետվությունը դիտանցող փորձագետների հատուկ խմբի անդամ՝ իրավապահ ոլորտում:

ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի 5-րդ փուլի գնահատողների նախապատրաստման դասընթաց

ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի հետ ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ 2015թ. մարտ ամսին ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում վերջինի մասնագետների կողմից անց է կացվել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում գնահատող-փորձագետների որակավորման դասընթաց, որին մասնակցել և երկրների փոխադարձ գնահատումների մասնակցության իրավունք են ստացել ՖԴԿ, ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ գլխավոր դատախազության թվով 5 ներկայացուցիչ, ինչպես նաև ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի անդամ երկրներից՝ թվով 28 ներկայացուցիչ:

Ֆինանսական հետախուզության մարմինների Էգմոնտ խումբ

Հունվար և հունիս ամիսներին ՖԴԿ պատվիրակությունը մասնակցել է Էգմոնտ խմբի աշխատանքային խմբերի հանդիպումներին և լիագումար նիստին: Էգմոնտ խմբի կոմիտեին է ներկայացվել ՖԴԿ կողմից նախաձեռնված և ղեկավարվող՝ Էգմոնտ խմբի անդամ ՖՀՄ-ների միջև տեղեկատվության փոխանակման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրի ամփոփ հաշվետվությունը: Քննարկվել է նշված ծրագրի հիման վրա ՖԱԹՖ-ի հետ համատեղ ուղեցույց մշակելու գործընթացը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների գծով աշխատանքային խմբում ՖԴԿ պատվիրակության անդամները ներկայացրել են ՓԼ/ԱՖ ազգային ռիսկի գնահատման և տեղեկատվական համակարգի հասունության մոդելի հիման վրա ՖԴԿ կողմից իրականացված ինքնագնահատման արդյունքները:

Ընդլայնման գծով աշխատանքային խմբի շրջանակներում ներկայացվել են Էգմոնտ խմբին անդամակցության համար ՖԴԿ կողմից հովանավորվող Թուրքմենստանի և Իրանի Իսլամական Հանրապետության կողմից իրականացված և անդամակցություն ձեռք բերելուն ուղղված աշխատանքները:

Էգմոնտ խմբի կողմից կազմակերպվող ուսուցման ծրագրերի շրջանակներում ՖԴԿ պատվիրակության ներկայացուցիչները հանդես են եկել «Տեղեկատվական համակարգի հասունության մոդելի հիման վրա իրականացված ինքնագնահատման արդյունքները» և «Ռիսկերի ազգային գնահատում» թեմաների ներկայացմամբ:

ՖԱԹՖ

ՖԴԿ պատվիրակությունը՝ որպես դիտորդ փետրվար և հունիս ամիսներին մասնակցել է ՖԱԹՖ-ի հերթական լիագումար նիստերի աշխատանքներին, այդ թվում՝ ՖԱԹՖ անդամ երկրների փոխադարձ գնահատման հաշվետվությունների քննարկմանը:

ՖԱԹՖ-ի Աշխատանքային խմբերի հանդիպումների շրջանակներում ՖԴԿ ներկայացուցիչը հանդես է եկել «ՀՀ ՓԼ/ԱՖ ազգային ռիսկի գնահատում» թեմայով ներկայացմամբ:

Վարշավայի կոնվենցիայով նախատեսված Կողմերի համաժողով

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են Եվրոպայի խորհրդի «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2005թ. Վարշավայի կոնվենցիային ՀՀ համապատասխանության գնահատման հետ կապված աշխատանքներ, որոնց շրջանակներում սեպտեմբեր ամսին ՖԴԿ պատվիրակությունը և ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչը մասնակցել են կոնվենցիային ՀՀ համապատասխանության գնահատման հաշվետվության նախնական քննարկմանը:

ՖԴԿ պատվիրակությունը մասնակցել է վերջինի 7-րդ նիստի աշխատանքներին, որտեղ ՖԴԿ ներկայացուցիչը ընտրվել է Կողմերի համաժողովի բյուրոյի անդամ:

Կոնվենցիան վավերացրած երկրների համապատասխանության գնահատման աշխատանքներին մասնակցելու նպատակով 2015թ. հուլիս ամսին ՖԴԿ աշխատակիցը մասնակցել է Կոնվենցիայի համաձայն հիմնադրված Կողմերի համաժողովի կողմից կազմակերպված գնահատող-փորձագետների վերապատրաստման սեմինարին:

Եվրասիական խումբ

ՀՀ-ն, որպես դիտորդ-անդամ՝ ի դեմս ՖԴԿ-ի, շարունակել է ակտիվորեն մասնակցել Եվրասիական խմբի նախաձեռնություններին:

Նոյեմբեր ամսին ՀՀ պատվիրակությունը մասնակցել է Եվրասիական խմբի 23-րդ լիագումար նիստին, որի ընթացքում քննարկվել են հետևյալ հիմնական հարցերը.

- Երկրների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 2-րդ փուլի գնահատման ժամանակացույցը,
- Բելառուսի, Ղազախստանի, Թուրքմենստանի և Ուզբեկստանի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի փոխադարձ գնահատման առաջընթացի հաշվետվությունները,
- Եվրասիական խմբի դիտորդ-անդամների շրջանակի ընդլայնման հետ կապված հարցեր:

ԱՊՀ անդամ երկրների ֆինանսական հետախուզության մարմինների ղեկավարների խորհուրդ

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ պատվիրակությունը մասնակցել է ՖՀՄՂԽ 5-րդ և 6-րդ նիստերին, ինչպես նաև կից գործող աշխատանքային խմբի հանդիպումներին:

Նիստերի ընթացքում քննարկվել են հետևյալ հիմնական հարցերը.

- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ռիսկերի և սպառնալիքների գնահատման և ռիսկերի զսպման նպատակով գործընթացների մշակման աշխատանքային խմբի

կանոնակարգը և անդամների կազմը. խմբի ղեկավար է ընտրվել ՖԴԿ ներկայացուցիչը,

- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին ԱՊՀ մասնակից պետությունների 2007թ. հոկտեմբերի 5-ի պայմանագրում փոփոխությունների և լրացումների կատարելու հարցը,
- Միջազգային ահաբեկչական կազմակերպություններում ներգրավված անձանց բացահայտմանն ուղղված միջոցառումները,
- ՖՀՄՂԽ դիտորդ-անդամների կազմի ընդլայնման և ԱՊՀ այլ մարմինների հետ փոխգործակցության հետ կապված հարցեր:

Սեպտեմբեր և նոյեմբեր ամիսներին ՖԴԿ պատվիրակությունը մասնակցել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ռիսկերի և սպառնալիքների գնահատման և ռիսկերի զսպման նպատակով գործընթացների մշակման աշխատանքային խմբի հանդիպումներին, որոնց ընթացքում քննարկվել են հետևյալ հիմնական հարցերը.

- Աշխատանքային խմբի գործունեության ընթացակարգը և 2016-2017թթ. աշխատանքային ծրագիրը,
- Երկրների ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման փորձը,
- Տարածաշրջանային ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը:

ԱՊՀ մասնակից երկրների ՖՀՄՂԽ ձևավորման մասին համաձայնագրի շրջանակներում անդամ երկրների միջև տեղեկատվական փոխգործակցության ապահովման նպատակով ՖԴԿ-ն ինտեգրվել է Եվրասիական խմբի միասնական տեղեկատվական հարթակի տեսաժողովային կապի համակարգում, որի միջոցով իրական ժամանակի ռեժիմում կազմակերպվում և անց են կացվում դասընթացներ և աշխատանքային քննարկումներ:

ՖԴԿ և օտարերկրյա ՖՀՄ-ների միջև կնքված փոխըմբռնման համաձայնագրեր

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ կողմից փոխըմբռնման հուշագիր է կնքվել Ղազախստանի ՖՀՄ-ի հետ: ՖԴԿ-ն նաև Էգմոնտ խմբի կողմից վերանայված տարբերակով վերակնքել է նախկինում ստորագրված փոխըմբռնման հուշագրերը Ռուսաստանի Դաշնության և Խորվաթիայի ՖՀՄ-ների հետ: 2015թ. դրությամբ ՖԴԿ կողմից կնքվել են փոխըմբռնման հուշագրեր թվով 31 երկրների ՖՀՄ-ների հետ[5]:

5. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության խախտումները, կիրառված պատասխանատվության միջոցները

2015թ. ընթացքում հաշվետվություն տրամադրող անձ ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատություններում իրականացված ստուգումների արդյունքներով բացահայտվել են մի շարք խախտումներ, և կիրառվել են համապատասխան պատասխանատվության միջոցներ:

[5] Տե՛ս Հավելված 2:

Ֆինանսական հաստատությունների կողմից օրենսդրության խախտումները հիմնականում վերաբերել են հաճախորդի պատշաճ ուսումնասիրությանը, տեղեկությունների պահպանմանը, ներքին դիտարկումների մարմնի իրավասություններին, ներքին իրավական ակտերին և ներքին դիտարկումների մարմնի կողմից կառավարման բարձրագույն մարմնին ներկայացվող հաշվետվությանը վերաբերող պահանջների ոչ պատշաճ իրականացմանը և այլն: Կիրառված պատասխանատվության միջոցները՝ ըստ ֆինանսական հաստատությունների տեսակների, ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

2015թ. ֆինանսական հաստատությունների նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցները

Բանկեր	8 բանկի կողմից թույլ է տրվել 23 խախտում, որոնցից. • թվով 11 խախտման համար կիրառվել են նախազգուշացումներ, • թվով 1 խախտման համար կիրառվել է և նախազգուշացում և տուգանք՝ 500.000 ՀՀ դրամի չափով
Վարկային կազմակերպություններ	1 ընկերության կողմից թույլ է տրվել 3 խախտում, որոնց բոլորի դեպքում կիրառվել է տուգանք՝ ընդհանուր 350.000 ՀՀ դրամի չափով
Ապահովագրական ընկերություններ	2 ընկերության կողմից թույլ է տրվել 3 խախտում, որոնց բոլորի դեպքում կիրառվել են նախազգուշացումներ
Փոխանակման կետեր	4 փոխանակման կետի կողմից թույլ է տրվել 4 խախտում, որոնց բոլորի դեպքում կիրառվել են նախազգուշացումներ

Ինչ վերաբերում է ոչ ֆինանսական հաստատություններին, հաշվետու ժամանակահատվածում պատասխանատվության միջոց է կիրառվել միայն ինտերնետ շահումով խաղ կազմակերպող 2 անձի նկատմամբ յուրաքանչյուրը 200.000 ՀՀ դրամի չափով տուգանքի տեսքով՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված ներքին իրավական ակտ ունենալու և լիցենզավորմանը հաջորդող 1-ամսյա ժամկետում լիազոր մարմնում հաշվառվելու պահանջը խախտելու համար:

ՖԴԿ աշխատակիցները մասնակցել են ֆինանսական կազմակերպություններում իրականացված ստուգումներին՝ օժանդակելով ֆինանսական կազմակերպությունների ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին համակարգի դիտանցման աշխատանքներին:

6. Ուսուցում, խորհրդատվություն և տեխնիկական օժանդակություն

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներգրավված իրավասու կառույցների, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձանց աշխատակիցների գիտելիքների խորացման և կարողությունների զարգացման նպատակով 2015թ. ընթացքում կազմակերպվել են մի շարք ուսուցողական ծրագրեր և հանդիպումներ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 3-ի և Հավելված 4-ի ներքո:

Հավելվածներ

Հավելված 1

ՖԴԿ ներկայացված հաշվետվությունները

Հաշվետվություն տրամադրող անձինք	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառված են	*2015թ. ընթացքում ՖԴԿ-ին ներկայացված հաշվետվություններ*	
		Պարտադիր տեղեկացման	*Կասկածելի*
Ֆինանսական հաստատություններ			
Բանկեր	22	347841	231
Վարկային կազմակերպություններ	32	802	4
Արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք	191	31	-
Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք	1	70	-
Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող լիցենզավորված անձինք	6	173	1
Ներդրումային ընկերություններ («Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձինք)	8	410	1
«Արժեթղթերի շուկայի մասի» ՀՀ օրենքի համաձայն՝ կարգավորվող շուկայի արժեթղթերի կենտրոնացված պահառուն	1	-	-
Ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերություններ	8	-	-
Ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձինք	2	-	-
Գրավատներ	114	744	-
Ոչ ֆինանսական հաստատություններ			
Ռիելտորական գործունեություն իրականացնող անձինք	215	-	-
Նոտարներ	100	7183	2
Փաստաբաններ, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք	1491	-	-
Անհատ ձեռնարկատեր հաշվապահներ և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք	8	-	-
Անհատ ձեռնարկատեր աուդիտորներ և աուդիտորական գործունություն իրականացնող իրավաբանական անձինք	34	-	-
Թանկարժեք մետաղների դիլերներ	-	-	-
Թանկարժեք քարերի դիլերներ	21	-	-
Արվեստի գործերի դիլերներ	-	-	-
Սակարկությունների կազմակերպիչներ	-	-	-
Շահումով խաղ և խաղատներ,	11	19	-

Վիճակախաղ կազմակերպող անձինք	4	-	-
Ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձինք	4	-	-
Հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք	-	-	-
Վարկային բյուրոներ	-	-	-
Անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազորված մարմին (հաշվառված ռեգիստրներ)	165	873	-
Իրավաբանական անձանց գրանցող պետական մարմին (պետական ռեգիստր)	1	-	-
Ընդամենը	**2439**	**358146**	**239**

Հավելված 2

ՖԴԿ-ի և օտարերկրյա ՖՀՄ-ների միջև կնքված փոխըմբռնման հուշագրեր

Երկիր	ՖՀՄ անվանումը
Ավստրալիա	Ավստրալիայի գործարքների հաշվետվությունների և վերլուծության կենտրոն
Արաբական Միացյալ Էմիրություններ	Փողերի լվացման դեմ պայքարի և կասկածելի գործարքների մարմին
Բելառուս	Ֆինանսական դիտարկումների վարչություն
Բերմուդա	Ֆինանսական հետախուզության գործակալություն
Թաիլանդ	Փողերի լվացման դեմ պայքարի գրասենյակ
Թայվան (Չինաստան)	Արդարադատության նախարարության հետախուզման բյուրոյի փողերի լվացման դեմ պայքարի բաժին
Իսրայել	Իսրայելի փողերի լվացման կանխարգելման մարմին
Իրանի Իսլամական Հանրապետություն	Ֆինանսական հետախուզության մարմին
Լեհաստան	Ֆինանսական տեղեկատվության գլխավոր վերահսկող
Լիխտենշտեյն	Ֆինանսական հետախուզության մարմին
Խորվաթիա	Փողերի լվացման դեմ պայքարի գրասենյակ
Կանադա	Կանադայի գործարքների և հաշվետվությունների վերլուծության կենտրոն
Կիպրոս	Փողերի լվացման դեմ պայքարի մարմին
Հարավային Աֆրիկայի Հանրապետություն	Ֆինանսական հետախուզության կենտրոն
Ղազախստան	Ֆինանսական դիտարկումների հանձնաժողով
Ղրղզստան	Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆինանսական հետախուզության պետական ծառայություն
Ճապոնիա	Ճապոնիայի ֆինանսական հետախուզության կենտրոն
Մակեդոնիա	Փողերի լվացման կանխարգելման տնօրինություն
Միացյալ Թագավորություն	Հանցավորության դեմ պայքարի ազգային կենտրոն
Մոլդովա	Փողերի լվացման կանխարգելման և վերահսկողության գրասենյակ
Մոնտենեգրո	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման վարչություն
Չինաստան	ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և վերլուծության կենտրոն
Պանամա	Պանամայի ֆինանսական վերլուծության մարմին
Ռումինիա	Փողերի լվացման կանխարգելման և հսկողության ազգային գրասենյակ
Ռուսաստան	Ֆինանսական դիտարկումների ծառայություն
Սան Մարինո	Ֆինանսական հետախուզության գործակալություն
Սաուդյան Արաբիա	Ֆինանսական հետախուզության մարմին
Սերբիա	Սերբիայի փողերի լվացման կանխարգելման վարչություն
Վրաստան	Վրաստանի ֆինանսական դիտարկումների ծառայություն
Տաջիկստան	Ֆինանսական դիտարկումների դեպարտամենտ
Ուկրաինա	Ուկրաինայի ֆինանսական դիտարկումների պետական կոմիտե

Հավելված 3

Ուսուցում ՖԴԿ, ՀՀ ԿԲ այլ ստորաբաժանումների և ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ներգրավված պետական մարմինների աշխատակիցների համար

Թեմա	Մասնակիցներ	Ամսաթիվ
Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից կազմակերպված՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում գնահատող-փորձագետների որակավորման դասընթաց	ՖԴԿ, ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչներ	Մարտի 9-ից 13
Ռուսաստանի կենտրոնական բանկի կողմից կազմակերպած «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում բանկային համակարգի աշխատանքի կազմակերպումը: Արժույթի վերահսկում» թեմայով դասընթաց	ՖԴԿ աշխատակից	Մարտի 24-ից 26
ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի կազմակերպության Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի կողմից կազմակերպված «Էլեկտրոնային փողերի և վիրտուալ արժույթների կիրառմամբ ստացվող հանցավոր եկամուտների օրինականացման հետ կապված հանցագործությունների բացահայտում և քննություն» թեմայով սեմինար	ՖԴԿ աշխատակից	Մարտի 31-ից ապրիլի 1
ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի կազմակերպության Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի կողմից կազմակերպված՝ «Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի տարածաշրջանում անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի նպատակով՝ ծագման, տարանցման և նպատակակետ հանդիսացող երկրների դատախազների և կենտրոնական մարմինների ցանցի հիմնադրում/ամրապնդում» նախաձեռնության ներքո թվով երրորդ լիագումար հանդիպում	ՖԴԿ աշխատակիցներ	Հուլիսի 23-ից 25
«Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի համաձայն հիմնադրված Կողմերի համաժողովի կողմից կազմակերպված՝ վերը նշված կոնվենցիային երկրների համապատասխանությունը գնահատողների վերապատրաստման սեմինար	ՖԴԿ աշխատակից	Հուլիսի 15-ից 16
ԱՄՆ պետական դեպարտամենտի կողմից կազմակերպված՝ զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ համաժողով	ՖԴԿ և ՀՀ գլխավոր դատախազության ներկայացուցիչներ	Հուլիսի 22-ից 23
Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից կազմակերպված «Ռիսկի վրա հիմնված մոտեցումներ. ՓԼ/ԱՖ վերահսկողություն ֆինանսական հատվածի վերահսկողների համար» թեմայով դասընթաց	ՖԴԿ աշխատակից	Օգոստոսի 24-ից 28
«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ժամանակակից մարտահրավերները» թեմայով սեմինար-քննարկում	ՖԴԿ և ՖՎՎ աշխատակիցներ	Հոկտեմբերի 1
«Եվրոպայում կոռուպցիայի, փողերի լվացման դեմ պայքարի և հանցավոր գույքի վերականգնման միտումները» թեմայով միջազգային համաժողով	ՖԴԿ աշխատակից	Հոկտեմբերի 20-ից 21

ԱՊՀ դաշնային գործակալության «Նոր սերունդ» կարճաժամկետ ճանաչողական ծրագիր	ՖԴԿ, ՖՀԿՎ և ՖՎՎ ներկայացուցիչներ	Նոյեմբերի 9-ից 13
Լեհաստանի ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված «Կոռուպցիայի արդյունքում փողերի լվացման դեմ պայքար» թեմայով համաժողով	ՖԴԿ աշխատակիցներ	Նոյեմբերի 17-ից 18
«Մաքսային Միության ընթացակարգերի օգտագործմամբ, ինչպես նաև ԱՊՀ մասնակից երկրներում և Լատվիայում արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելու միջոցով փողերի լվացման հիմնական ցուցանիշները» թեմայով կլոր սեղան (տեսաժողովային կապ)	ՖԴԿ աշխատակիցներ	Նոյեմբերի 20
Ռուսաստանի Դաշնության ազգային հետազոտական միջուկային համալսարանի Ֆինանսական և տնտեսական անվտանգության ինստիտուտի կողմից կազմակերպված «Ռիսկերի կառավարման միջազգային չափանիշները» թեմայով դասընթաց (տեսաժողովային կապ)	ՖԴԿ աշխատակիցներ	Նոյեմբերի 23-ից 26
Ռուսաստանի Դաշնության ֆինանսական մոնիթորինգի ծառայության միջազգային ուսումնամեթոդական կենտրոնի կողմից կազմակերպված «Կրիպտոարժույթները և վճարման նոր եղանակները» թեմայով կլոր սեղան (տեսաժողովային կապ)	ՖԴԿ աշխատակիցներ	Նոյեմբերի 27
Ռուսաստանի Դաշնության ֆինանսական մոնիթորինգի ծառայության միջազգային ուսումնամեթոդական կենտրոնի կողմից կազմակերպված «Ահաբեկչության և ծայրահեղականության ֆինանսավորման արդի խնդիրները» թեմայով սեմինար (տեսաժողովային կապ)	ՖԴԿ աշխատակիցներ	Դեկտեմբերի 3
«ՓԼ/ԱՖ ազգային ռիսկերի գնահատման իրականացումը և ռիսկահենք մոտեցման կիրառումը, ազգային ռիսկերի գնահատման հայեցակարգի պատրաստման ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրությունը» թեմայով կլոր սեղան (տեսաժողովային կապ)	ՖԴԿ աշխատակիցներ	Դեկտեմբերի 11
Ռուսաստանի Դաշնության ազգային հետազոտական միջուկային համալսարանի ֆինանսական և տնտեսական անվտանգության ինստիտուտի կողմից կազմակերպված «Ռիսկերի վրա հիմնված մոտեցումը որպես ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի արդյունավետության բարձրացման մեխանիզմ» թեմայով սեմինար	ՖԴԿ և ՖՀԿՎ ներկայացուցիչներ	Դեկտեմբերի 16-ից 17
Ուզբեկստանի ՖՀՄ-ի նախաձեռնությամբ կազմակերպված «Եվրասիական խմբի անդամ երկրների ՖՀՄ-ներում ռազմավարական վերլուծության հետ կապված աշխատանքների կազմակերպումը» թեմայով կլոր սեղան (տեսաժողովային կապ)	ՖԴԿ աշխատակիցներ	Դեկտեմբերի 18

Հավելված 4

Ուսուցողական ծրագրեր և հանդիպումներ հաշվետվություն տրամադրող անձանց և նրանց վերահսկող մարմինների համար

Թեմա	Մասնակիցներ	Ամսաթիվ
ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգը կարգավորող ՀՀ օրենսդրության, ՖԱԹՖ Հանձնարարականներ ներդրմանն ուղղված միջազգային նոր փաստաթղթերի և ՀՀ ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման արդյունքների վերաբերյալ հանդիպում	ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցներ և ՀՀ ԿԲ ՖՎՎ ներկայացուցիչներ	Հունվարի 29
ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգը կարգավորող ՀՀ օրենսդրության, ՖԱԹՖ Հանձնարարականների ներդրմանն ուղղված միջազգային նոր փաստաթղթերի և ՀՀ ՓԼ/ԱՖ Ազգային ռիսկերի գնահատման արդյունքների վերաբերյալ հանդիպում	Վարկային կազմակերպությունների և գրավատների ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցներ և ՀՀ ԿԲ ՖՎՎ ներկայացուցիչներ	Փետրվարի 5
ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգը կարգավորող ՀՀ օրենսդրության, ՖԱԹՖ Հանձնարարականների ներդրմանն ուղղված միջազգային նոր փաստաթղթերի և ՀՀ ՓԼ/ԱՖ Ազգային ռիսկերի գնահատման արդյունքների վերաբերյալ հանդիպում	Ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունների և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձանց, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող անձանց ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցներ և ՀՀ ԿԲ ՖՎՎ ներկայացուցիչներ	Փետրվարի 12
ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգը կարգավորող ՀՀ օրենսդրության, ՖԱԹՖ Հանձնարարականների ներդրմանն ուղղված միջազգային նոր փաստաթղթերի և ՀՀ ՓԼ/ԱՖ Ազգային ռիսկերի գնահատման արդյունքների վերաբերյալ	Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի, ներդրումային ընկերությունների և ներդրումային ֆոնդերի կառավարիչների ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցներ և ՀՀ ԿԲ ՖՎՎ ներկայացուցիչներ	Փետրվարի 19
ՓԼ/ԱՖ դեմ պայքարին նվիրված սեմինար-քննարկում	Ռիելտորական գործունեություն իրականացնող անձանց ներկայացուցիչներ, թանկարժեք քարերի և մետաղների դիլերներ	Փետրվարի 26
ՓԼ/ԱՖ դեմ պայքարին նվիրված սեմինար-քննարկում	Աուդիտորական կազմակերպությունների ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցներ և ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչներ	Մարտի 19
ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգը կարգավորող ներպետական և միջազգային ակտեր, ՀՀ ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման արդյունքներ	Խաղատների, շահումով խաղերի, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող անձինք և ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության	Ապրիլի 2

	ներկայացուցիչներ	
ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգը կարգավորող ներպետական և միջազգային ակտեր, ՀՀ ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման արդյունքներ	Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի, արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց ներքին դիտարկումների մարմինների աշխատակիցներ և ՀՀ ԿԲ ՖՎՎ ներկայացուցիչներ	Ապրիլի 22
ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգը կարգավորող ներպետական և միջազգային ակտեր, ՀՀ ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման արդյունքներ	Անհատ ձեռնարկատեր հաշվապահներ, հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի ներկայացուցիչներ	Ապրիլի 30
ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգը կարգավորող ներպետական և միջազգային ակտեր, ՀՀ ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման արդյունքներ	Փաստաբաններ, իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերեր և փաստաբանական ընկերությունների ներկայացուցիչներ	Մայիսի 6
Հաշվետու անձանց մոտ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործընթացի իրականացման առանձնահատկությունները	ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի աշխատակիցներ	Մայիսի 8